տանէութիւնը։ Մինչեւ իսկ զինուորական բարձր պաշտօնները — սպարապետից մինչ հազարապետ, որ իրենց իւրայատուկ բնաւորութեան շնորհիւ՝ պէտք է որոշ չեղում ներկայացնէին, անդամ նրանք եւս ենթակայ են ընդհանուր օրէնքին։

2. Ազգային Ժողովից բղխած համարեա բոլոր պաշտօնները հաւաքական են, կոլեգիալ, բացի «Հայր Հայաստանեացի» պաշտօնից եւ հազարապետութիւնից։ Անդամ հանր. նախագահն ու կուսակալները, որոնք ըստ երեւոյթին միանձնեայ իշխանութիւններ են, իրօք միանձնեայ չեն. նրանք կառավարում են յատուկ խորհուրդների հետ միասին — նախագահին կից 12-ի եւ 6-ի խորհուրդները, իսկ կուսակալներին կից՝ նահանգական խորհուրդը, 3 հոգուց բաղկացած — որոնց սովորական նախագահներն են նրանք եւ ուրիշ ոչինչ։ Սրանով պիտի բացատրել այն կարգը, որ բոլոր պաշտօնեաներին, նրանց մահուան, հրաժարեցման կամ այլ նման դէպքերում, խսկոյն փոխարինում են նրանց երկրորդները եւ սրանք վարում են իրենց պաշտօնները մինչեւ որ հաստատում են համապատասխան մարմինների կողմից (յԽ)։

Դեռ աւելի. զինուորական բարձր պաշտօնները եւս — սպարապետութիւն եւ ասպետութիւն — հաւաքական են, որ մի չտեսնուած երեւոյթ է ամբողջ աշխարհում. 9 սպարապետներից եւ 9 ասպետներից իւրաքանչիւր 3 հոգին կազմում են մէկ-մէկ սպարապետութիւն եւ մէկ-մէկ ասպետութիւն։

3. Պաշտօնեաները իրենց պաշտօնների մէջ անկախ են, ազատ եւ ոչ ոք իրաւունք չունի նրանց իջեցնելու կամ հրաժարեցնելու իրենց պաշտօնից, բացի դատարանից (յԸ, յԲ)։ Նշանակում է ինքը պաշտօնեան է, որ իր գործունէութեամբը որոշում է իր բախտը։ Նա կը պատժուի, եթէ յանցանք գործի. օրինակ, կաշառակերութեան համար պաշտօնեան զրկւում է իր տեղից եւ մինչեւ կեանքի վերջը այլեւս չի կարող որեւէ պաշտօնի ընդունուել (ղէ)։ Միայն Ազգ. Ժողովը կարող է նրան իր իրաւունքների մէջ վերականգնել (մլէ)։

4. Պաշտօնեայից պահանջւում է օրինակելի ճշդապահութիւն եւ բարեխղճութիւն դէպի իր պաշտօնը. եթէ նա, առանց հիւանդութեան պատճառի, բացակայում է, վճարում է 5 դահեկան տուգանք եւ այդպէս մինչեւ 3 անդամ. չորրորդ անդամ արդէն բանտ է դրւում 12 օր ժամանակով (ճը)։

5. Իւրաքանչիւր պաշտօնեայ, նախ քան իր պաշտօնի հրովարտակն ստանալը, հաւատարմութեան երդում է ընդունում՝ իր պաշտօնին, կրօնին, հայոց օրէնքներին եւ պետութեանը (լդ, ղը)։ Անդամ հոգեւորական պատգամաւորը երդւում է եւ տալիս իր երդման թուղթը, որ եւ դնում ենք այստեղ հետաքրքրութեան համար.—

«Ես Սեղբեստրոս, շնորհօքն Աստուծոյ արք-եպիսկոպոս Աղձնու, խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ առաջի ձեր, եղբարք, եւ երդնում ի վերայ Ս. Կտակարանիս, որ եմ ծնունդ սեպհական ազգէն հայոց, հաւատացեալ ի Քրիստոս, աւանդութեամբ Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ, շնորհօքն Աստուծոյ արք-եպիսկոպոս Աղձնու եւ փոխանորդ Ծայրագոյն Հայրապետին եւ եղբայրակից իմոց եպիսկոպոսաց ամենայն հայոց, խոստանամ առաջի Աստուծոյ եւ ձեր, զի կալով մնասցեմ հաստատուն ի վերայ այսմ հաւատոյ եւ սիրոյ ի վերայ ազգին իմոյ եւ հնազանդ օրինաց կարգադրութեան տանն հայոց, զամենայն աւուրս կենաց իմոց» (լը)։

6. Բազմաթիւ օրէնքներով հեղինակն արգելում է օտարազգիներին կամ օտար դաւանութեանց պատկանողներին պետական պաշտօնի ընդունել. «Մի ոք այլ ազգ դոցէ պաշտօն ի տանէն հայոց, բայց ի սեպհական ազգէն հայոց եւ աւանդութեամբ Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ» — ասում է օրէնքը (մդ)։ Ազգով հայն իսկ չի կարող Հայաստանում պաշտօնեայ լինել, եթէ նա կրօնով հայ-լուսաւորչական չէ (մե)։

Սակայն, դրքի վերջերում, իրեն յատուկ անհետեւողականութեամբ, յանկարծ չեղւում է իր այդ հիմնական օրէնքներից եւ մի բոլորովին հակասող, նրանց ժխտող օրէնք դնում, անշուշտ մեր կեանքի իրական պայմաններին զիջելով։

Նա գիտէ, որ երկարամեայ ստրկութեան